ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.09.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/187

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.08.2020թ. թիվ 26/26-1/12050-2020 գրությամբ «Ֆրսթշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 07.08.2020թ. թիվ Ե/40/1404-20 գրության հիման վրա 13.08.2020թ. թիվ 26/26-1/12050-2020 գրությամբ նախաձեռնել է «Ֆրսթշին» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Ֆրսթշին» ՍՊԸ -ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ֆրսթշին» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Ֆրսթշին» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/187 ընթացակարգի շրջանակներում 28.08.2020թ. ժամը 10:20-ին և 04.09.2020թ. ժամը 11:35-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 07.08.2020թ. թիվ Ե/40/1404-20 գրությամբ հայտնել է, որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար գործիքների և գործիքային հատուկ հարմարանքների գնման նպատակով կազմակերպվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-96/20» ծածկագրով գնման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որի թիվ 4, 7, 9, 12, 18, 19, 26, 38, 41, 53, 55 և 68-րդ չափաբաժինների մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Ֆրսթշին» ՍՊԸ-ն:

2020թ. հուլիսի 28-ին հայտերի բացման և գնահատման նիստը կասեցվել է, և գնահատող հանձնաժողովը առաջարկել է «Ֆրսթշին» ՍՊԸ-ին շտկել հրավերի պահանջների նկատմամբ հայտում տեղ գտած անհամապատասխանությունները:

2020թ. հուլիսի 31-ին «Ֆրսթշին» ՍՊԸ-ն էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկել է իր կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրի շտկված տարբերակը, իսկ օգոստոսի 4-ին դիմում Ընթացակարգի թիվ 9, 19, 26, 53, 55 և 68-րդ չափաբաժինների մատակարարումից հրաժարվելու մասին:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ ներկայացնում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու համար Ընկերության վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/187 ընթացակարգի շրջանակներում 28.08.2020թ. ժամը 10:20-ին և 04.09.2020թ. ժամը 11:35-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2020/187 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2020/187 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն իր կարիքների համար գործիքների և գործիքային հատուկ հարմարանքների գնման նպատակով կազմակերպել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-96/20» ծածկագրով գնման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ֆրսթշին» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.07.2020թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Ֆրսթշին» ՍՊԸ-ն առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով՝ հավելված 1.1, պետք է ներկայացնի իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը՝ առանց կամ համարժեքը արտահայտության և մեկ լեզվով (հայերեն կամ ռուսերեն):

3. Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ Կարգի 41-րդ կետի համաձայն նիստը կասեցվել է և առաջարկվել է Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

4.Նույն արձանագրությամբ արձանագրվել է, որ «Ֆրսթշին» ՍՊԸ-ն ներկայացրել է թիվ 9, 19, 26, 53, 55 և 68-րդ չափաբաժիններից հրաժարվելու դիմում:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 13.08.2020թ. թիվ 26/26-1/12050-2020 գրությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 07.08.2020թ. թիվ Ե/40/1404-20 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

<u>գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:</u>

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն իր կարիքների համար գործիքների և գործիքային հատուկ հարմարանքների գնման նպատակով կազմակերպել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-96/20» ծածկագրով գնման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ֆրսթշին» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.07.2020թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Ֆրսթշին» ՍՊԸ-ն առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով՝ հավելված 1.1, պետք է ներկայացնի իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը՝ առանց կամ համարժեքը արտահայտության և մեկ լեզվով (հայերեն կամ ռուսերեն):

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ Կարգի 41-րդ կետի համաձայն նիստը կասեցվել է և առաջարկվել է Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Նույն արձանագրությամբ արձանագրվել է, որ «Ֆրսթշին» ՍՊԸ-ն ներկայացրել է թիվ 9, 19, 26, 53, 55 և 68-րդ չափաբաժիններից հրաժարվելու դիմում:

Այսպիսով՝ ***<u>«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին</u>***

<u>մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:</u>

Ուսումնասիրելով «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից Ընթացակարգի շրջանակներում ներկայացված հիմքերը, դրանք համադրելով գործում առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ «Ֆրսթշին» ՍՊԸ-ն թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի խախտում, քանի որ Ընթացակարգի հայտերը բացվելուց հետո 04.08.2020թ. Պատվիրատուին ուղղված գրությամբ Ընթացակարգի թիվ 9, 19, 26, 53, 55 և 68-րդ չափաբաժինների մասով հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.08.2020թ. թիվ 26/26-1/12050-2020 գրությամբ «Ֆրսթշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Ֆրսթշին» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**